բաղկացած կայք չունեցող մշակներից, որք ոչ մի գործին չեն կարող գործ դնել իրանց փոխ ստացած գումարները“։

Իշխ. Վասիլչիկովը նկատում է, որ Ռուսաստանում, ընդհակառակն, ազգայնակութիւնն մեծ մասը կազմված լինելով մանր հողատէր գիւղացիներից, որք հեշտութեամբ կարող են իրանց փոխ ստացած գումարները գործ դնել սեփական երկրագործութեան կատարելագործելուն, հարկաւորութիւն են զգում փոխատուութեան մէջ և մի և նոյն ժամանակ կապված լինելով իրանց բնակեցրած հողի հետ անասնական կապերով, ներկայացնում են իրանց փոխ ստացած գումարների համար աւելի հաստատ երաշխաւորութիւն, որ լինում է կամաւոր և փոխադարձ, քան թէ Եւրոպայի աշխատողները, որք անդադար տեղափոխվում են մի տեղից միւս տեղ։

Իշխ. Վասիլչիկով երևի խօսում է միայն Եւրոպայի սեփականութիւն չունեցող մշակների վրա, որովհետև մեզ յայտնի է, որ Գերմանիայում, Ֆրանսիայում, Իտալիայում և մանաւանդ Շվէյցարիայում կայ հողատէր մշակների երկրագործ դասը և միայն աշխատողների չորրորդ անմասնված դասը, որ աւելի ուշ գոյացաւ, գուրկ է ամեն սեփականութիւնից։

ՔԱՂԱՔԱՑԻՆ ՎԱՐՁՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

Վերջին ժամանակներս, ինչպէս յայտնի է Թիֆլիզ քաղաքի բնակիչներին, Թիֆլիզի մէյդանի վրա բերած հացի գինը բարձրացաւ, չը նայելով որ էն տեղերի առատութեան միթիթարիչ տեղեկութիւնները, որոնք իրանց հացովը կերակրում են Թիֆլիզը, պէտք է շատ ցածրացնէին հացի գինը։ Հացի մազանդի էսպէս անբնական բարձրանալը առաջ բերին և պահում են թանգութեան մէջ՝ Թիֆլիզի մէջ լոյս ընկած չարչիքը և էն հարուստ մօնօպօլիստները (մենավաճառները), որոնք էժան գնով մեծ քանակութեամբ առնում են հացը, թանգ գնով ծախելու համար։ Այս վերջինների ինքնակամ վարմունքին առաջն առնելու համար և մանաւանդ աղքատ բնակիչների գործ ածելու Թիֆլիզի հացի գինը որոշելու համար,—Քաղաքագլուխը հարկաւոր համարից միջնորդելով, Ձին. որական վաչութենից բանականի հաց վեր առնել պատրաստական գնով, որը, համեմատելով փողոցի հիմիկուայ մազանդի հետ, շատ ու շատ թեթև է և էդ հացը տալ Քաղաքային Կառավարութեան անօրէնութեանը։ Էս հացը ինտենդանտի մագազինից (ամբարից) արդէն ստացած է։ Աչքի առաջ ունենալով, որ դրսից տուն եկած հացի մեծ մասը փռնչիքն ու հաց թխողներն են առնում, կամ նրանց մարդիկը և քիչ մասը ճեում է քաղաքիս բնակիչներին բաւականացնելու համար, որի պատճառով վերջինները ակամայ պէտք է տանեն թանգութիւնը,—Քաղաքագլուխը ահա ինչ անօրէնութիւնը արեց. 1) Ինտենդանտի մագազինից ստացած թագաւորական հացը միայն փռընչիների վերա ծախել և արգելել նրանց մինչև թագաւորական հացի պաշարի հատնելը փողոցում չառնեն ոչ դրսից բերած հացը ոչ էլ զանազան մանաւոր առնողների ամբարներից դուրս բերած. 2) իսկ փողոցում եկած հացը բոլորը ճեայ, որ քաղաքի բնակիչները առնեն առանց փռնչիների մասնակցութեան ինչպէս որ վերև էլ ասուեցաւ. և 3) հազարակ փռնի հացը 3½ կոպէկով ծախել գրվանքէն կամ 6 գրվանքայ մի աբասով, իսկ թոնդրի վրացու եղանակով թխած հացը 4 կոպեկով։

Թիֆլիզի քաղաքագլուխը, իր այս անօրէնութիւնը յայտնում է, որ ամենքը իմանան և ամենախստագոյն պատիժ կրեն։ Ինչ որ վերև պատճառ բերեցինք, թէ ինքն է գրաւել հացագործութեան ուշադրութիւնը, թէև իր մանուկ գոյութեամբ չէր կարող նա դեռ ևս ցոյց տալ իր նշանակութիւնը։ Ժողովուրդը առ հացագործ ձգտումն է ունենում դէպի մի որ և իցէ երևոյթ, բայց թէ ինչ է այդ բանը և ինչ օգուտ կարող էր քաղել նա այդ բանից դեռ ևս անգէտ է, միայն թէ նա յոյս ունի...։

Բայց ինչ է անում հոգևոր դպրոցը։ Նա իր ծննդեան օրից մինչև այսօր միայն պահել է իր գոյութիւնը, յաճախակի փոփոխվող և անկայուն գաղափարների տէր յաջորդների կառավարութեան ներքոյ, որոնք բացի մարդահաճութիւն պատվելուց և փառքի ծարաւը յագեցնելուց բոլոր միւս բաների համար անպիտան են։ Եթէ այս մասին իրաւասութիւններ պահանջողը կը լինեն, գուցէ կարողանանք նոցա հարցասիրութեանը բաւականութիւն տալ, բայց այժմ կրկնում եմ, որ, մեր հասարակութեան զարգացման այս չարժառիթը իր բոլոր գոյութեամբ առանց օգտակար հետեւանքի է դործել մինչև այսօր։ Ցնծանք այսուհետև, բայց այս այսուհետևը, ևս տեսուր ապագայ է իսօսանում մեզ եթէ այսպէս կը չարունակվի, ինչպէս որ կայ...։

Թուրք բնակիչների թիւը որ հասնում է 1800-ի առաւել բարձր է, բայց ոչ նշանակութիւնը. նա այն սովորական տիպն է ներկայացնում ընդհանրութեան առաջ, ինչ որ յատուկ է բոլոր ասիական այդ ցեղերին, թէ և այստեղ աւելորդ էր խօսել նորա հասարակական գաղափարի վերաց, բայց չասել որ կրթութիւն ասած բանի հետն անգամ չկայ նոցա մէջ՝ կը նշանակի մեղանչել ընդդէմ խղճի։ Նոցա միակ կրթարանը իբրեանց մզկիթն է, որտեղ ամեն մի սոխտայ կամ միրզայ և կամ վերջապէս մի մոլայ ժողոված գլխին մի քանի մանուկներ, թափված յատակի վերայ խառնիճաղանճ ձայնով անդադար փրփրացնում է և այն տարիայ մի քանի մասերում։ Այնուհետև նոքա կրթված են, բայց ինչի մէջ...։ Շատ սարսափելի յատկութիւններում...

Նոցա բարձր և ազնուական դասը ուղարկում է իր զաւակը արքունական ուսումնարան, որտեղ նա վայրիվերոյ կերպիւ մնուցանում է մի անհատատ և երեսուն դաղափար, չը կամենալով օգուտ քաղել դորա ընդհանրապէս մատակարարող կրթութիւնից։ Նա դուրս է գալիս այնտեղից դուրս բերելով իր հետ և մի ազնատեալ լեզու, որպէս թէ ուսերէն և ամենի առաջ պարծանքով կամենում է ցոյց տալ իր հրաչալի գիտութիւնը։ Այս պիտանա, առաջ եկողները թէև յայտնապէս չեն նկատվում այն ընտանեկան սովորութեանը որ ունեն դոցա ստորին դասը, բայց մի այլ եղանակով նոցա զօրացուցիչ չարժառիթն են, և մի այլ դասի հարստահարող խումբը։

Վաճառականութիւն ասածդ այստեղ միայն մանրավաճառութիւնն է, հայերի և թուրքերի մէջ առնասարակ, բայց վերջիններս առաւել ստոր են և այդ գործում, որոնց մեծագոյն մասը մրգավաճառ են (բազկալ)։ Միայն մի քանի անհատներ հայերից ունեն հիմնաւոր առևտուր, որոնք ստանում են վաճառելի նիւթերը Տաճկաստանից, Պարսկաստանից և Ռուսաստանի զանազան քաղաքներից—Մոսկուայից, Նիժնի վաճառափողոցից, Թիֆլիզից և Բաքուից և այս նիւթերը սպառում են թէ իրեանց և թէ շրջապատող հայ և թուրք գիւղերի վերայ։

Տիրապետող արհեստները սոքա են, գաւակաբութիւն, կոշկակարութիւն, դերձակութիւն, ոսկերչութիւն, թարմաչութիւն (ձուլողներ), պղնձագործութիւն, դինագործութիւն, թամբ և սարքագործութիւն (սառաջ) դարբնութիւն և հիւսնութիւն (դուլդար և խառատ)։ Եւրոպական արհեստի տեսակից միայն դանվում են Դերձակներ (պարտնոյ), ատաղձագործներ (ստալար) կոշկակար (սապոժնիկ), առհասարակ տհաս կերպով, խամաո կարող, չվորնիկ և սայլագործ (պլոտնիկ)։ Եւ այս բոլոր արհեստաւորներն էլ հայեր են, փոքր բացառութեամբ հրէաների և այն դերձակներ (պարտնոյ) մէջ։

Թուրքերից արհեստաւորներ շատ քիչ են, քանի մի ձի պայտողներ (նալբանդ) հիւսն և միւսներից փոքր...։

Բայց մի արհեստ կայ թուրք բնակիչների մէջ և այն մի քանի անհատի, որ շատ բարձր է իր նշանակութեամբ, սա է չարչարութիւն (մետաքսագործութիւն), որի վերայ առանձնապէս խօսելու դիտաւորութիւնս թողում եմ ուրիշ անգամ։

Թող ներեն ինձ իմ սիրելի հայրենակիցներս, որ ես մերժել եմ իմ չրթունքներից իբրեանց ցանկացած գովաբանութիւնը, ճշմարիտ խօստովանում եմ երբ ես գտել եմ նոցա մէջ մի գովութեան արժանի լուր, չեմ ղլացել խնդրել նորա հրատարակութիւնը ի լուր հասարակութեան։ Բայց նոքա մանաւանդ երևոյթներ են, որ չեն կարող վերաբերել ընդհանրութեանը, իսկ ընդհանրութեան վերայ պարծենալ կարելի էր այն ժամանակ երբ նա կաշխատէր թափ տալ իրանից իրան օրհնող տգիտութեան մրուրը...։

Իմ միւս նամակս անչուշտ լինելու է քանի մի արհեստների վերաբերած նկատողութիւններ բարձր դասի հարստահարութիւնը ստորին դասի վերայ։

Մաժակ։

Փետր. 1873 թ.

ՆԱՄԱԿ ՋԱՒԱԹԱԼԻՑ

Այս տարի յունվարի 26-ին այստեղ ներկայացրին հայերէն թատրոն „Էս էլ քի մ ցիկլութիւն“ հեղ. Մ. Տ. Դրիգորեանցի և հետն էլ 5 և 6 տեսիլներ „Դալալ Ղազօխ“։ Ներկայացումն աջող էր։ Տախտը հանած զուտ եկամուտն էր մօտ 40 ռուբլի որ և բաժանվեցաւ աղքատ հայ գերդաստանացը։

Բարեկենդանի կիրակի գիշեր 9 ժամին հրդեհն գնաւակով խփեցին քաղաքիս պատգամաւոր Աւետիս Օհանեանցի եղբօր Օհանիսին, որ միւս օրը վախճանվեցաւ։ Այս հրեռնագործութիւնը չը բաւականանալով, թաղման թէ միւս գիշերը նրան չթեցալին գերեզմանից հանելով, չորերը հանել էին և իրան գետնի երեսին թողել։

Մարտի 16-ից վրա 17-ի գիշերը այստեղի հայոց եկեղեցուց դողացան մօտ 1200 մանեթէ արժողութեամբ խաչեր, բուրվառներ և այլ իրեղէններ։ Աշխատութեամբ տեղիս օկրուգի կառավարչի պ. Շուկովիչիկովի՝ գողերը (լեզդիք) գտնվեցան, որոց մօտ էր չորեղէնի մեծ մասը և արծաթեղէնից փոքր մասը։ Գողերից մինը բերդի պատից, որ մօտ 3 սաժէն բարձրութիւն ունի, թռչելով ուզում էր ազատի իր գլուխը։ Բերդից մօտ ¾ վերստ հեռաւորութեամբ գինուորներն հասան և սպանեցին։

Մարտի 24-ին ուրիշ կալանաւորներից երկու ուզում էին փախչել։ Մէկին բերդի պատից ժողով և միւսին բերդի պատի վրա սպանեցին, իսկ երրորդին բերդից մօտ մի վերստ հեռաւորութեամբ բռնեցին, բայց ընդիմանալու պատճառով վիրաւորեցին։

Մ. Քոչարեանց։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒԻՐԵՐ

Մեր Գանձակի թղթակիցը գրում է մեզ՝ նա հաղորդած էի մի քանի լուրեր, իբրև որոց և Դամիրչու գիւղի բնակիչներից եօթ հոգուց սպանելը։ Այժմ հաւաստի աղբիւրից լսում ենք, որ ճշմարիտ չէ եղած, այլ տարածուած աւազակների կատաղի կերպով այստեղ այնտեղ թափուելից, որոց համար այժմ լսում ենք, որ պ. Միրզոեվը ուղարկվելով՝ փախել են և անցել Արազի այն կողմը։

***

Լսումենք, որ քաղաքային վարչութենից նշանակված մանուածողովը վճռել է՝ 1) վերցնել արվեստագործական ուսումնարանից գիշերօթիկ աշակերտներին և թողնել միայն երթեւեկներին, որք ուսումնարանից կը ստանան տնտղ (կիսապանսիօնէր), 2) ամենաչքաւորների համար կը լինի պատրաստական դասատուն, որտեղ կուտեցանեն հրօնք և թուաբանութիւն, 3) արուեստական պարապմունքը կը լինի առաւօտ մինչև 1 կամ 2 ժամ, 4) ճաշից յետոյ դասեր արուեստներին վերաբերեալ և մաթեմատիկա, իսկ կրօնքը և լեզուները չեն լինի։

***

Պետերբուրգից գրում են մեզ՝ ձեզ յայտնի է, որ Պետերբուրգի հայ-ուսանողներից բաւական ընկերները օգնութիւն են ստացել, բայց ուսում աւարտելուց և իրանց ապահովելուց յետոյ, նրանցից ոչ մինը ուղարկած չէ ուսանողութեանը մի կապէկ անգամ։

***

Նոյն թղթակիցը գրում է մեզ՝ Հայ ուսանողներից մի քանիսը կամենում են թարգմանել դասական գրեանք ժողովրդական ուսումնարանների համար և տպել իրանց ծախսով։

***

«Մեղու Հայաստանի» լրագիրը յայտնում է, որ տիկիններից և օրիորդներից հրատարակվելու սաստգրի անունը կը լինի «Ընտանիք»։

***

Պետերբուրգից հաղորդում են մեզ որ ուսանողները սիրով լսեցին այն լուրը որ հայուհիները պիտի մի ամսագիր հրատարակեն Թիֆլիսում և նրանցից մի քանիսը կամենում են ամսագրի մշտական օգնականներ լինել իրանց աշխատութենով։

***

Նոյն տեղից գրում են մեզ՝ Հայ ուսանողներից մի քանիսը կամենում են թարգմանել դասական գրեանք ժողովրդական ուսումնարանների համար և տպել իրանց ծախսով։

***

«Մեղու Հայաստանի» լրագիրը յայտնում է, որ տիկիններից և օրիորդներից հրատարակվելու սաստգրի անունը կը լինի «Ընտանիք»։

***

Պետերբուրգից հաղորդում են մեզ որ ուսանողները սիրով լսեցին այն լուրը որ հայուհիները պիտի մի ամսագիր հրատարակեն Թիֆլիսում և նրանցից մի քանիսը կամենում են ամսագրի մշտական օգնականներ լինել իրանց աշխատութենով։

***

Ներսիսեան Հայոց Աղգային-Հոգևոր Դպրոցի Հոգաբարձութիւնը, պարտաւորութիւն համարելով

1) Գուցէ կարողանանք նոցա վերայ մի նամակագրութիւն կազմել։

2) Տեղացիք ժիր և գործունեայ մարդիք են, ունեն երկաթի հանքեր և մեծ մասը երկաթագործութեամբ են պարապում ձմեռը։

3) Ուր կայ մանաւանդ հանք պղնձի։

4) Այստեղ բնակվում են Երևանից գաղթածների մի մասը և շատ քաջ և հիւրասէր են։

5) Ուր պատրաստվում է շերը տեղացիների ձեռքով տեղական հողից։

6) Մշակի ընթերցողներին արդէն յայտնի են այն անախորժ ընտրութիւնները, որով մեր պատգամաւորների խումբը համարեայ գլխի վայր կործանելու կեսին հասցրեց տեղական դպրոցը իբրեան կամակորութեամբ արհամարհելով հատուցութեան առաջադէմ դասը, որը միաւոր մրցումներ ունենալու, թէ և յաղթվեց, ցաղթվեց ասում եմ, որովհետև խանութներում ընտրվող, գեհիկ դասին հաճելի և յաջորդին էլ հատանելի հոգաբարձութիւն պատրաստելու, առաջարկվեցան և հաստատվեցան պղտոր ջրում ձուկը որսալու։

յարգել յիշատակը հանգուցեալ Աւետիքայ Մովսիսեան փիլոյեանց, կարգադրեալ է, կատարել հոգեհանգիստ նորա գերեզմանի վրա, Սուրբ Նշան եկեղեցւոմը, առաջիկայ ապրիլ ամսոյ 22-ին, աշխարհամատրան կիւրակէի օրը, պատարագից յետոյ։ Այս մասին յայտնում է Թիֆլիզոյ բարեպաշտ հասարակութեանը։ Արժանայիշատակ փիլոյեանցը, իր կենդանութեան ժամանակը, կտակաւ նուիրել է Ներսիսեան Դպրոցին մի նշանաւոր կալուածք, որի արդիւնքը գործ է դրւում յօգուտ նոյն Դպրոցի։

***

Այս հինգշաբթի օրը, ապրիլի 19-ին Թիֆլիսի Ձմերային թատրոնում հայ օրիորդներ, տիկիններ և երիտասարդներ կը ներկայացնեն բարեգործական նպատակով պ. Գաբրիէլ Սունդուկեանցի «Գաղած օջախ» նոր կոմեդիան։

***

Մեզ հաղորդում են Քութայիսից հետևեալ տարօրինակ անցքի մասին։ Ապրիլի հինգշաբթի օրը տեղիս հայոց եկեղեցում լսեցինք վրացերէն լուսաւոր քարոզ, վրացերէն կարդացուեցաւ նոյն օրը Բարեխեղ հայրապետի հաղորդութեան համար ասած ճառը, նոյն լուսաւոր կարգադրիչը աւետարանը և կատարվեցաւ Քրիստոսի աւուր։ Յանկարծ կը լինէր որ Քութայիսու հայհոգևորականութիւնը պարզաբանէր այդ երևոյթի պատճառը։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԵՐՄԱՆԻԱ

Այս օրերս հրատարակվեցաւ Լէյպցիգում մի գիրք, որի հեղինակն է Միւնխենի մի ուսանող՝ Լուդվիգ Բաուէր։ Գիրքը ցոյց է տալիս մեզ թէ ինչ մանակցութիւն ունէին վերջին պատերազմի մէջ գերմանական համալսարանները։ Ամենահետաքրքիր թուանշանները նրանք են, որ վերաբերում են սպանված ուսանողների թուներին։ Ընկած չորս պրօֆէսօրներից և 248 ուսանողներից ամենից մեծ կորուստը արել է Լէյպցիգի համալսարանը՝ 63. յետոյ Բերլինի՝ 30, Գեօթինգէնի՝ 23, Միւնխէնի 21, Հալէ 19, Հէյդելբերգ 13, Ենա նոյնպէս 13, Բոննա 11, Բօնն 9, Տիւբինգէն 8, Ռոստօկ 6, Գրէյֆսվալդ, Կիլ, Վիւրցբուրգ՝ հինգ հինգ, Մարբուրգ 4, Գիսէն 3, Ֆրէյբուրգ և Միւնստէր երկու երկու, վերջապէս Էրլանգէն՝ 1։ Ամբողջ վեցամեայ համալսարաններում գրված 13,765 ուսանողներից, մի երրորդականը այսինքն 4510 մասնակցած են պատերազմի մէջ։ 1505 Գերմանիայի պրօֆէսօրներից՝ 15 զէնք էին առել, 253 ուրիշներ իրանց հիւանդանոցների և դաշտի վրա վիրաւորվածների հոգատարութեանը, իսկ 120 թէ խօսքով թէ գրվածներով նպաստում էին ազգային գործի համար։

ԹՒՐՔԻԱ

Գերմանական „Kolnische Zeitung“ լրագիրը հաղորդում է մեզ հետևեալ հետաքրքիր տեղեկութիւնները։ Կ. Պօլսի մէջ շրջակայքում անդադար կազմվում են գրամանական ընկերութիւնները։ Ամենից առաջադէմ են այդ մասին յոյները, նմանապէս հայերը սկսեցին գրականական ժողովները գումել։ Նորերումս հայերի մէջ հինգ այդ տեսակ ընկերութիւններ հիմնվեցան։ Մինը արտակարգ գիւղում Բոսֆորի վրա լսարանով, արդէն քանի մի հրապարակական ասեր ունեցած է, ուրիշը Կ. Պօլսի մէջ ընթերցասիրաց ընկերութիւն անունով, միւս ընկերութիւնները Սկուտարի Պեշիքտաշ գիւղերում Բոսֆորի վրա։ Այ-Համալներ անդամ հիմնեցին իրանց մէջ ընկերութիւն՝ գրել, կարդալ և հաշվել սովորելու նպատակով և նմանապէս կրթական գրքեր ու լրագիրներ կարդալու դիտաւորութեամբ։ Հրէաները նոյնպէս հետեւում են ընդհանուր շարժմանը՝ նորերումս նրանք իրանց մայրենի լեզվով մի թատրոնական ներկայացումն տուին որի արդիւնքը նուիրեցին իրանց ուսումնարանին։ Միայն Թուրքերի մէջ մտաւոր շարժումն շատ դանդաղ է գնում։ Ներերումս չը կարողացան Էրզնկիս գիւղում 15,000 պիաստէր (մօտ 900 րուբլի) հաւաքել մի ուսումնարան հիմնելու համար, այնպէս որ մի օտարազգի՝ Քրիստաքի Յօդրաֆօս անունով հարուստ ալբանացին՝ յանձն առաւ իրանից աւելացնել այնքան, որ հարկաւոր գումարը գոյանայ։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

Պարսից նոր տարվայ օրը մեծ ժողովրդական տօնախմբութիւն եղաւ Թէհրանի մէջ։ Նորին մեծութիւն Շահը հանդիսաւոր ընդունելութեան ժամանակ նկատելի յատկութեամբ խօսեց իր մտադրած եւրոպական ճանապարհորդութեան վրա, և յայտնեց որ այդ ճանապարհորդութենից նա մեծ հեռանկարներ է սպասում իր երկրի վերանորոգութեան համար։

ՆԱՄԱԿ Կ. ՊՕԼՍԻՑ

Ցաճկաստանում Հայոց եկեղեցւոյ բաժանվիլը զանազան դաւանութիւնների եղաւ ազգային միութեան քակտուելու գլխաւոր պատճառներից մինը։

Ազգը կորցրուց իր զօրութիւնը և նորա ուժերը ցրուեցան։

Մեք հեռու ենք այն նպատակից, որ կրկին քարոզենք կրօնական միութիւն, որովհետև բռնաբարել խղճի ազատութիւնը և համոզմունքը մեր գարու գործը չէ։ Բայց մի ազգ բացի կրօնքից ունի միութեան ուրիշ զօրեղ կապերը։—Նա կապուած է արիւնով և իր պատմական անցեալով։ Նա կապուած է լեզուով, որոյ մէջն է նորա կեանքը։ Նա կապուած է իր տնտեսական և հասարակական չահերով։

Բայց կղերի ազդեցութիւնը, կրօնքով բաժանելով մի անդամին ազգային ամբողջութիւնից, կրթեց և նոցա անմիջական յարաբերութիւնների և միւս կապերը։ Հայկայ զաւակները մինը՝ «ֆրանգեմ» ասելով, միւսը՝—«ընկլիս» երրորդը՝—«հոռոմ» սկսան ուրանալ հայութիւնը, եղբայրը քաժանուեցաւ եղբօրից։

Խաւարի դարը անցաւ։ փորձը ցոյց տուեց այն յոյսի սխալմունքը, թէ մի Հայ կարող էր կրօնափոխութեան վաճառքով գնել իր հանգստութիւնը։ թէ մի հռոմէական փափազ, մի ամերիկացի միսսիօնար, և այս կամ այն ֆրանսիական, անգլիական հիւպատոսները, դեսպանները, կարող էին մի օտար տէրութեան մէջ պաշտպանել Հայի իրաւունքները. և կամ նորա կը նպաստէին նորա մտաւոր և նիւթական զարգացմանը։

Բնական օրէնք է, որ մի առարկայի մեքենական չարժման ուժերը պէտք է կենդրոնացած լինեն նոյն իսկ առարկայի մէջ։ Արտաքին ուժը միայն ժամանակաւոր չարժառիթներ պէտք է լինեն։

Ազգի ընդհանուր չահերի վերայ մտածել, գործել և իրագործելու պէտքը, ազգի անմիջական միութենից կախումն ունի։ Բայց դժբախտաբար դեռ մեր կաթոլիկ, բողոքական և լուսաւորչական եղբայրները Ցաճկաստանում որոչ խումբեր են կազմում։ Նոցանից ամէն մինը նպատակ իւր համար է ապրում։

Ազգային մտածուլը մինչև այսօր չը բարձրացրեց միութեան խնդիրը։ (Մեք չենք նայում այդ հարցի վերայ կրօնական կէտից)։ Թէև ժամանակ առ ժամանակ յայտնուեցան զանազան հրաւէրներ, բայց նորա, լինելով բոլորովին միակողմանի, եղան ձայն բարբառոյ յանապատի։

Հակահաւատնեան կուսակցութեան բաժանուիլը վտանգանի՝ ամենայն ազատութիւն ճնշող, միտքը և հոգին կայկանդող չղթայներից, մի համարձակ քայլ էր դէպի ազգային միութիւն։ Բայց մեր լուսաւորչական Հայերը հրպէս նայեցան այդ երևոյթին։—Նորա ոգևորուեցան, ուրախացան, հրճուեցին և աւելի ոչինչ...

Կ. Պօլսի Հայերը դեռ ևս չունեն մի կենդրօն՝ ուր ազգի զանազան անդամները հաւաքուելով, նորա պիտոյքների վերայ մտածէին։ Հասարակաց սրճատները, այդ ժողովարանները ամենատեսակ դատարկախօս, մոլաշրջիկ և ծոյլ մարդերի, յայտնի բան է, չէին կարող բաւականութիւն տալ մի այդպիսի նպատակին։ Մի կենդրօն, որ կարող էր ժողովրդի գործունեայ և մտածող դասին մի տեղ հաւաքել, է ազգային կլուբը։ Այդ չունինք դուրկ են և Պօլսի Հայերը։

Ասելով կլուբներ, մեք չենք կամենում յիշել այնպիսի կլուբները, ուր չաճախորդքը միայն թղթախաղով ու զանազան զուարճութիւններով են վարում իրանց դատարկ կեանքի ծանրացած րոպէքը։ Այլ ազգային կլուբներ ասելով, մեք հասկանում ենք այնպիսիքը, որ ծնունդն այնպէս կոչած երեսելի կլուբական հերոսներին։ Ազգային կլուբ ասելով մեք հասկանում ենք մի կենդրօն, ուր հասարակական գործիչները, միաուել հաւաքուելով, խօսում են, վիճում են, հաճաւանում են, և վերջապէս մշակում են հասարակական գործերի դժուարին խնդիրները։ Այստեղ կազմվում են զօրեղ կուսակցութիւնները, այստեղից ծնվում են երեսելի առաջնորդները, և վերջապէս այստեղ կցվում են կրօնական մըրկով զատուած կապերը ազգի անդամներին։

Շատնեղ կը լինէր այդ հայացքը և միակողմանի, եթէ Հայերը իրանց հասարակական չահերը պահպանելու համար միայն կաչխատէին միանալ իրանց այլազգի ազգայինների հետ, առանց ուշադրութիւն դարձնելու միւս ազգութիւնների վերայ, որպիսի են Յոյները, Ասորիները, Հրէաները և այլն։

Մի պետութեան մէջ, որպէս է Ցաճկաստանը, հպատակ ազգութիւնները ժամանակ բացառութեամբ մի և նոյն լաւ կամ վատ վիճակի, մի և նոյն բախտաւոր կամ անբախտ դրութեան մէջ են ապրում։ Պաշտպանել այսպէս իրաւունքը սիրող ազգի ճնչումներից, համահաւասար ազատութիւն վայելել,—այդ բոլորի պէտքն է։ Այսօր իրաւացաւ մի ազգից նորա որևիցէ իրաւունքը, անպահպանութիւնը, այսօր բռնաբարուեցաւ նորա որևիցէ արտօնութիւնը, պատիւը, վաղը մի և նոյնը կարող է պատահիլ և միւսներին։ Այդպիսի հանգամանքներում հպատակ ազգերը պէտք է ունենան ներդաշնակ համաձայնութիւն և փոխադարձ օգնականութիւն դէպի հասարակաց բարին։ Որով հետև միակ ուժը, հանդիպելով աւելի զօրեղի ընդդիմադրութեան սիրտակտուղ կողմից, կորցնելու է իր նչանակութիւնը, առանց հասնելու որևիցէ իրի յաջող հետևանքին։

Իսկ Հայոց Պատրիարգը այս ինչ մասնաւոր դէպքի առիթով կտրում է իր յարաբերութիւնը Բռնաց պատրիարգարանի հետ և դորանով խըզվում է մի ազգի կապը միւսի հետ։ Զը նայելով, որ նոցա փոխադարձ յարաբերութիւնները որքան օգտաւէտ էին իրանց ներկայի և ապագայի չահերուն։

Այս տողերը գրելու ժամանակ ինձ բերեցին Մասիս լրագրի 1356 և 1358 համարները։ Նոցա մէջ մի յօդուած, որ թարգմանուած էր Բռնաց «Անթօլի» լրագրից բաւականին գրաւեց իմ հարցասիրութիւնը։ Նորա մէջ ամենայն անկեղծութեամբ ինչվում էր Յոյների ժամանակ դասի արձականքը դէպի հզրայրական սէրը և հաչտութիւնը Հայերի հետ, հեռու պահելով այս պարագայս մէջ կրօնական միչտ երիպատակութիւն ըղծող և տեղութիւն սերմանող խնդիրները։ Յօդուածագիրը մեղադրում է Բռնաց կղերի մոլեռանդութիւնը, որ կրօնական դէպքերի պատճառաւ կտրում են Հայերի հետ հաչտութեան և սիրոյ կապերը, որք միակ հիմքը կարող էին լինել նոցա ներկայի և ապագայի բարօրութեանը։ Մեք բոլոր սրտով համակրում ենք յօդուածագրի կարծիքը։

Տխուր երևոյթ է ներկայացնում, երբ նչմարում ենք Ցաճկաստանում ամէն մի դաւանութեան պատկանող ազգութիւնները, փոխանակ հիմնուելու ժողովրդական ուժերի վերայ, խիստ պինդ բռնած են կղերի փէշերից (քղանցից), Այդ իրօղութիւնը ունի իր քաղաքական պատճառները։ Բարձ. Դուռը մինչև այսօր եկեղեցականներին է ճանաչում որպէս ազգային գլխաւորների ներկայացուչիչներ։ Եւ ուրիչ կերպ չէր կարող լինել, երբ մահմետական աչխարհը իր կրօնական բնաւորութեամբ ինքը տակաւին չէ կարողացել ազատուել իր չէյխերի և ղազիների ազդեցութիւնից։

Մի բան, որ կարող էր թուլացնել կղերի միապետական բռնակալութիւնը, է ժողովրդական ընտրութիւնը։ Այն ժամանակ գոնեա կը դարձրէին այն անընդհատ բողոքները պատրիարգներից, գաւառական առաջնորդներից, և քահանաներից, և նորա կը սովորէին իրանց վարել որպէս կարդն է։

Հայոց ժողովրդականութիւնը իր եկեղեցւոյ խորին հնութիւնից ունի այդ արտօնութիւնը։ Բայց դժբախտաբար նորա արտաքին ձևերը միայն պահպանվում են այժմ...

Մ.

ՆԱՄԱԿ ԿԻՒՆԱԽՏԻՑ [1])

Ինչպէս ձեզ յայտնի է, Կիւնախտում կայ մի մանկավարժական Սեմինար ուր պատրաստվում են ուսուցիչներ ազգային դպրոցների համար։ Դպրոցի մէջ կան նոյնպէս Հայեր և Յունդարացիք իրրև համաւոր ունկնդիրներ, բայց այս օրերս արդէն այստեղ գտնվող հայերի համար որոչուեցաւ՝ բնդունել ի չարս պարտաւորիչ աչակերտների։

Այս չարաթուան մէջ Սեմինարի հրատարակչական քննութիւնքը տեղի ունեցան, ուր և ներկայ էին Ցիւրիխից եկած մի քանի պրօֆեսորներ, նախկին և ազգային լուսաւորութեան գլխաւոր տեղամը։ Քննութիւնը վերջանալուց յետոյ, այս վերջինը մի համառօտ տեղեկութիւն արաւ, ուր զգալ դնդի աչակերտք, ուր ցոյց տուաւ ոգևոր ուսումնասիրութիւն կրթութեան անհրաժեչտութիւնը, ուչեալցնելով թէ՝ նոցանից է կախուած Ցուիցերիոյ մանուկների կրթութիւնը և թէ՝ նորա ընդունելով ուսուցչական պաչտօն, մեծ պատասխանատուութիւն են յանձն առնում մանուկների կրթութեան վերաբերութեամբ և հետևաբար եթէ նորա իրենց խոչ են դնում այդ գործի մէջ և յանձնառու են լինում՝ այդ կնչանակէ ծանրաբեռնում են իրենց վերայ մանուկների մեղքը և ապա վերջացուց իր խօսքը չնորհակալութիւն մատուցանելով դպրոցի դիրեկտորին, որ հոգատարութեամբ իր պաչտօնը կատարած է։ Քննութիւնը վերջանալուց յետոյ, բոլոր աչակերտք և ուսուցիչք հրաւիրուեցան մի ընդհանուր դասիճ, ուր սոցա բաւականութեան համար ընթերցք էր պատրաստուած։ Այստեղ դարձեալ մի քանի ճառախօսութիւնք եղան աչակերտաց վերաբերեալ և մասնաւր Հայերի և Յունդարաց։ Ուսուցչներից մինը իր ճառը գլխաւորապէս ուղղեց դէպի Հայեր և Յունդարացիք (որովհետև օտար ազգութիւններից միայն այս երկուքը կը գտնուէին), Նա իր ճառի մէջ երջանիկ էր համարում այն ազգը, որ իր գրութեամբ այժմ ֆիզիկապէս ապահովուած, միայն իր մտաւոր կրթութեանը կը զբաղի։ Հայեր, Յունդարներ, ասում էր նա, դուք, որ համակրելով մեզ, եկած էք մեր երկիրը, աւելի էր դառնում պարծենալու ինձ իմ հայրենիքի վերայ և յիրաւի ես պէտք է պարծենամ, որովհետև չատ ազգութիւններից քաղաքակրթութեան կոչմանէ մենք չատ բարձր ենք, մեր համալսարանը, մեր բազմարուեստանոցը չամախմում են չատ ուրիչ ազգերից, ուրեմն դուք ևս Հայեր, որ ժողովուած էք այստեղ ուսէք մեր դիտութիւնքը, ընդունեցէք մեր սովորութիւնքը և ապա վերադարձէք ձեր հայրենիքը և վերացէք տգիտութեան քողը։ Այս պարոնը մի այնպիսի ոգևորութեամբ ճառաբանեց, որ ամբողջ դահլիճը թնդաց ծափահարութեամբ և ապա բաժակներ դարձուեցան հայերի և յունդարացիների կենաց համար։

Արժի ցաւօք պիտի յայտնեմ, որ Ցիւրիխի Ռուս ուսանողների մէջ մի գժտութիւն է ծագել։ Ինչպէս ձեզ յայտնի է Ռուս ուսանողները երկու մասնաձարաններ ունէին (Ուչակ № 6. Նամակ Ցիւրիխից), և իւրաքանչիւր ուսանողք երկու կուսակցութեան բաժանուած, երկու մասն ևս ներքին գործերի երկպատակութեան պատճառաւ թչնամի էին միմեանց։ Երեկ մի կուսակցութեան պատկանող 3 մարդ մտել են միւս կուսակցութեան մի ուսանողի տունն և միրձ ի մահ ճարդեն տուել նորան։ Ուսանողք այս բանի վերայ վրդոված, մի արտաքոյ կարգի ժողով են կազմում այդ գործի առթիւ, ուր որոչում են այդ ծեծողներին իբրև ընկերութեան վտանգալի մարդիք, հեռացնել տալ Ցիւրիխի կանտոնից ռատիկանութեան միջնորդութեամբ։ Այս իրաւունքը ծանուցանում են ռատիկանութեան, և նա յանձն է առնում հետախուզել դորա չարժառիթները և անցքի որպիսութեանը տեղեկանալ։ Գործը դեռ ևս վերջացայ չէ։ Երկու Ռուս ուսանողուհիք փողոցին մէջ պատահելով այն ծեծողներից մէկին, յարձակվում են և ապտակներ են զարնում, իսկ նա միայն պաչտպանվում է։ Ահա թէ ինչպիսի աչքով պիտի նայեն ռուս ուսանողների և ուսանողուհեաց վերայ Ջուիցարացիք։ Ցուրիխի հայ ուսանողներն մէջ մի օգտաւէտ սկզբունք ծագած է և օրեց օր նորա իրագործութեանը կը ապասինք։ Հայ ուսանողները կամին մի ընկերութիւն հիմնել, որի նպատակը լինի—ուսումնասիրել ազգային գրականութիւնը և հարցերը, օգնել միմեանց փոխադարձաբար ընդհանուր մարդկային զարգացման մէջ և նոցուկ լինել միմեանց նիւթականապէս։ Այս առթիւ արդէն մի քանի ժողովներ եղած են և ընկերութեան հիմնական յօդուածներ կը կազմակերպվին։

Ապրիլ 1873. Ա. Ս.

1) Կիւնախտը գտնվում է Ցիւրիխից ոչ հեռու Ցիւրիխեան ծովակի վրա։